



## Ս. ԱԹՈՌԻՍ ԲԱՐԵՐԱՐ

### ՏԻԱՐ ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 25 Ապրիլ 1975, յետ ժիջօրէին, Ամմանէն դալով և Ս. Աթոռիս Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի ժիջոցաւ անցնելով Յորդանան գետի կամուրջ-սահմանադրութէն, Երուսաղէմ կարճ այցելութեամբ ժամանեց Ս. Աթոռիս բարերար Մեծ. Տիար Տատուր Տատուրեան:

Մեծախարզ բարերարը չորս օրեր հիւրը եղաւ Ամեն. Պատրիարք Ալըրբազան Հօր՝ որուն հետ ջերմ հանդիպում ունեցաւ իր ժամանման երեկոյնի իսկ:

Երուսաղէմ հասնելէ ետք, հազիւ քիչ մը հանգչած պանդոկին մէջ, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ Տիար Տատուրեան Ս. Աթոռ ժամանեց, ուր շատ հաճելի և յուզիչ քանի մը ժամեր անցուց: Նախ այցելեց Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարան, ուր, Տեսուչ Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեանի առաջնորդութեամբ այցելեց Վարժարանին Մանկապարտէզի, Նախակրթարանի և Երկրորդական բաժինի գրեթէ բոլոր բաժինները, հետաքրքրուելով աշակերտներու ստօրեայով և աւանդուած դասանիւթերով: Մեծախարզ բարերարը յուզումի պահեր ապրեցաւ, երբ առաջին անգամ ըլլալով հոն հանդիպեցաւ այն աշակերտներուն, որոնք «Տատուրեան սաներ» կը կոչուին, ի պատիւ իրեն: Ինչպէս ծանօթ է, Մեծ. Տիար Տատուր Տատուրեանի ձեռնարկութեամբ, հովանաւորութեամբ և նիւթական լայն աջակցութեամբ էր որ 1968ին Երուսաղէմի մէջ հաստատուեցաւ «Տատուրեան սաներ» անունով ճանչցուող գրութիւն մը, որուն շնորհիւ այդ թուականէն մինչև այսօր աւելի քան 250 հայ տղաք առիթ ունեցան դալու Երուսաղէմ և Պատրիարքարանիս կրթական գոյգ օժանդներուն՝ Ս. Թարգմանչաց դպրոցին և ժառանգ. Վարժարանին ու Լնծախարանին մէջ ստանալու հայեցի ամբահիմ կրթութիւն մը:

Ապա Տիար Տատուրեան հանդիպեցաւ ժառանգաւորաց Վարժարան, ինչպէս նաև Տպարան:

Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վարդապետի ընկերակցութեամբ, մեծախարզ հիւրը այցելեց նաև Ս. Յարութեան Տաճար, ուր մանրամասնօրէն ծանօթացաւ տարիներէ ի վեր կատարուող նորոգութիւններուն, և մեծապէս խանդավառուեցաւ հայկական նորոգուած բաժիններուն շքեղութեամբ և զեղեցկութեամբ:

Տիար Տատուր Տատուրեան, Գերշ. Տ. Շահէ Աբքեպիսկոպոսի ընկերակցութեամբ այցելեց նաև Սիոն լեռան հայապատկան Ս. Փրկիչի վանքը, և ծանօթացաւ հոն ևս կատարուող շինարարութիւններուն :

Մեծայարդ բարերարը քանի մը տեսակցութիւններ ունեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր հետ, որոնց ընթացքին մասնաւորաբար շեշտեց անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը մնայուն և անձեռնմխելի հիմնադրամի մը ըստեղծումին՝ որուն արդիւնքով ապահովուէին և ընդարձակուէին կրթական գործն ու «Տատուրեան սաներ»ու դրութիւնը :

Տիար Տատուրեան ուրախ առիթը ունեցաւ ճաշելու իր այնքան սիրած «գաւակներ»ուն հետ Շարաթ կէսօրին, ի ներկայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Աբքեպիսկոպոսի, միաբան հայրերու, ուսուցիչներու և ուսանողութեան : Յարգելի բարերարը իր հայրական խօսքին մէջ կոչ քրաւ հետաքրքրութեամբ դիմք ունկնդրող սաներուն՝ լաւագոյն կերպով օգտուիլ Ս. Աթոռին կողմէ ընծայուած ուսանելու քացառիկ դիւրութիւններէն, և հետագային գործել ու ազրիլ իրրև հաւատացեալ և ազգանուէր Հայեր :

Մեծապէս խանդավառուած Երուսղէմի մէջ իր տեսած կրթական ու շինարարական աշխատանքներէն, Ս. Աթոռիս բարերար Մեծ. Տիար Տատուր Տատուրեան Երկուշարթի, 28 Ապրիլին հրաժեշտ առաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրէն և զէպի Միացեալ Նահանգներ մեկնեցաւ Պեն կուրթիօն օդակայանէն :

